

ԿԱՐԵՆ ՍՈԿՐԱՏԻ ԽԱՆՅԱՆ

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի
գիտության և միջազգային համագործակցության
հարցերով դեկանի տեղակալ
kkhanian@mail.ru*

ORCID ID: 0000-0002-1602-116X

DOI: 10.54503/978-5-8080-1557-9-326

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՆ ԵՎ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

*Բանալի բառեր՝ Մաքսիմ Գորկի, հայ-ռուս գրական կապեր, հայ մամուլ,
հայ գրականագիտություն:*

Ներածություն

Հանդիսանալով ռուսական դասական գրականության դեմոկրատական ավանդույթների ժառանգորդներից մեկը՝ Մաքսիմ Գորկին իրեն դրսևորեց որպես նորարար գեղարվեստական խոսքի թարմացման ու զարգացման ասպարեզում:

Անվանի բոլոր գորկիագետները հրճվանքով ընդունեցին Մ. Գորկու մուտքը գրական ասպարեզ՝ ընդգծելով, որ նա իր թարմ ու պատկերավոր խոսքով նշանավորեց մի նոր դարաշրջան ոչ միայն ռուսական, այլև համաշխարհային մշակույթի պատմության մեջ:

Դեռևս գրական գործունեության առաջին քայլերից սկսած, Մ. Գորկու երկերում հնչել է արդարացի բողոքի ձայնը դաժան ուժերի դեմ, այն չար ուժերի, ովքեր արհամարհանքով էին վերաբերվում հասարակ մարդկանց, այն մարդկանց, ում ուժերով էին մշտապես արարվում բարիքներ, պաշտպանվում երկիրը օտար թշնամիների դեմ մղված մարտերում:

Ինչպես ռուս ականավոր գրողների, այդպես էլ Մ. Գորկու ստեղծագործությունները մշտապես գտնվել են հայ ընթերցողների գրասեղաններին: Ու պատահական չէ, որ նրա երկերի վերաբերյալ մշտապես իր թարմ խոսքն է հնչեցրել ժամանակի հայ մամուլը:

Մաքսիմ Գորկու գրվածքները 20-րդ դարասկզբին հայերեն թարգմանել են Հովհ. Թումանյանը, Տ. Հովհաննիսյանը, Կ. Կրասիլ-

նիկյանը, Ստ. Շահումյանը, Գր. Բեդեյանը, Ավ. Իսահակյանը, Հ. Ստեփանյանը, Սիմակը, Ոստանիկը, Ս. Բաթիյանը, Սարգիս Մ. Իսահակյանը և այլք։ Այդ թարգմանությունները լույս են տեսել տարբեր պարբերականներում՝ «Մուրճ», «Լումա», «Մշակ», «Նոր-Դար», «Տարագ» և այլն։ Գորկու երկերը տպագրվել են նաև առանձին գրքույկներով՝ «Մի անգամ աշնանը» (Թիֆլիս, 1901), «Ամայի դաշտում» (Ալեքսանդրապոլ, 1902), «Մակար Չուդրա» (Թիֆլիս, 1903), «Մտքեր» (Շուշի, 1903) և այլն։

Իր գրական, հասարակական և հրապարակախոսական գործունեությամբ Մ. Գորկին մեծապես նպաստել է ռուս իրականության մեջ հայ գրականության մասսայականացմանը։

Անգնահատելի է Մաքսիմ Գորկու դերը հայ գրականության զարգացման գործում։ Մ. Գորկին որպես աստվածաշնորհ գրող, հարազատ որդու իրավունքով ու սիրով մտել է հայկական դարավոր գրականության աշխարհը և արժանացել մաշտոցյան սերունդների ուշադրությանն ու սիրուն։

Տասնիններորդ դարի ռուսական դասական գրականությունն ընդհանրության մեջ գեղարվեստական խոսքի մի նոր աստիճան էր համաշխարհային մշակույթի պատմության մեջ։

Ավանդույթը շարունակվում էր հաջողությամբ։ 1890-ական թվականներին գրական ասպարեզ իջած ռուս գրողների շարքում նոր երևույթ էր Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկին։

Որպես ռուսական դասական գրականության դեմոկրատական ավանդույթների ժառանգորդներից մեկը՝ նա դարձավ նորարար գեղարվեստական խոսքի թարմացման ու զարգացման ասպարեզում։

Անվանի բոլոր գորկիագետները հրճվանքով ընդունեցին Մ. Գորկու մուտքը գրական ասպարեզ՝ ընդգծելով, որ նա իր թարմ ու պատկերավոր խոսքով նշանավորեց մի նոր դարաշրջան ոչ միայն ռուսական, այլև համաշխարհային մշակույթի պատմության մեջ։

Ընդհանրապես Մ. Գորկու կյանքը բնութագրվում է աստվածահաճո մի բառով՝ ՊԱՅՔԱՐ... պայքար հանուն ՄԱՐԴՈՒ, որն արժանի է ազատ ու հպարտ ապրելու, հավասարապես օգտվելու այն բարիքներից, որ արարում է ինքն իր քրտնարար աշխատանքով։

Դեռևս գրական գործունեության առաջին քայլերից սկսած՝ Մ. Գորկու երկերում հնչել է արդարացի բողոքի ձայնը դաժան ուժերի դեմ, այն չար ուժերի, ովքեր արհամարհանքով էին վերաբերվում հասարակ

մարդկանց, այն մարդկանց, ում ուժերով էին մշտապես արարվում բարիքներ, պաշտպանվում երկիրը օտար թշնամիների դեմ մղված մարտերում:

Այդ ժամանակահատվածում Գորկու ստեղծագործությունները գտնվել են հայ մշակույթի ականավոր ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում:

Տիգրան Հովհաննիսյանն առաջիններից է, որ արձագանքել է Գորկու տպագրված երկերին: 1900 թ. «Մշակի» 101-րդ համարում Տ. Հովհաննիսյանը անդրադառնում է Մ. Գորկու՝ Ս. Պետերբուրգում լույս տեսած «Рассказы» ժողովածուին: Նա նշում է. «Մակսիմ Գորկիյ պատկանում է իննսունական թականների ռուս վիպագրողների թիվն եւ նրանց մէջ անկասկած առաջին տեղն է բռնում իր տաղանդով, որ ինչքան կարելի է դատել առաջին հատորով, դեռ չէ հասել իր զարգացման գագաթնակէտին»¹: Հոդվածագիրը նաև հայտնում է, որ ռուսաց վիպագրության մեջ չի լսվել այնպիսի ջերմ քարոզ հանուն անհատի ազատության, ինչպես Գորկու երկերում: Մ. Գորկին նոր ուղի է բացում ռուս վիպագրության մեջ՝ «շեշտելով այն նշանակութիւնը, որ ունի մարդուս բարոյականի տեսկէտից պատուի զգացմունքը, անհատականազատութեան գիտակցութիւնը»²:

Մ. Գորկու «Рассказы» ժողովածուի 2-րդ հատորին Հովհաննիսյանը անդրադառնում է «Մշակի» 149-րդ համարում: Հոդվածագիրը նշում է, որ այդ հատորում պարզ երևում է ավելի այրացած, հասունացած տաղանդ, նկատվում ավելի պարզ ոճ և ավելի քիչ նիցշեականություն:

Վերլուծելով ժողովածուի պատմվածքները՝ գրախոսը գալիս է հետևյալ եզրակացության. «Ինչ վերաբերում է աշխարհայեացքին, ընդհանուր գծերով, նա այդ հատորում նույնն է մնացել, ինչ որ առաջին հատորումն էր: Այդտեղ էլ Գորկիյ շարունակում է մնալ ոգեւորված քարոզիչ եւ ջատագով ազատ, ինքնագլուխ անհատականութեան, զորեղ զգացմունքների, հաստատ բնաւորութիւնների, «սրտում անհանգստութեամբ ծնվածների», բայց այժմ նրա մէջ աւելի քիչ է երեւում այդ կող-

¹ «Մշակ», Թիֆլիս, 1900, № 101, էջ 1–3:

² Նույն տեղում, էջ 3:

մից ծայրայեղություն կամ աֆֆեկտացիա, թէեւ այնու ամենայնիւ երեւում է»³:

Իր հաջորդ գրախոսականում՝ «Մի անգամ աշնանը» պատմվածքի վրա», Տ. Հովհաննիսյանը շեշտում է. «Մանրավեպը... զօրեղ տպավորություն է գործում եւ մի տեսակ կարեկից համակրություն է ազդում դէպի «ստորացածները եւ զրկվածները», որոնց դատի պաշտպանութեանն են հուրված ռուս գեղարուեստական գրականութեան լաւագոյն երկերը»⁴:

1900 թ. «Տարագ» ամսագրի 38, 39 համարներում Գորկու գրական գործունեության մասին «Մակսիմ Գորկիյ» վերնագրով ծավալուն վերլուծական հոդված է ներկայացնում Խաչիկ Սամուէլեանը:

«Գորկին համարեա առաջին գրողն է,– գրում է Սամուէլեանը,– որ իր հանճարեղ, գեղարուեստական գրչով ստեղծեց մի շարք փայլուն պատկերներ ռուս պրոլետարիատի կյանքից, որ նրա սրտին այնքան մօտ է, որի դառն բաժակից ինքն էլ է ըմպել: Կարդալով Գորկու բոլոր գրածքները, ականայ կըզգաք իրաքանչիւր քայքայփոխում հեղինակի ներկայությունը»⁵:

Անդրադառնալով Գորկու կերպարներին՝ Սամուէլեանը նշում է, որ շրջմոլության ախտը նրանց ծուծն է մտել, արյունը վարակել, որովհետեւ այդ կյանքը ազատ է, անկախ, ինչպես երկնային թռչունների կյանքը: «Շրջմոլութիւնը մի գերբնական ոյժ է ստանում այդ հերոսների մեջ, երևան հանելով կամ վեհ, մեծահոգի, անկախ, անձնական քաջութեան տէր մարդիկ՝ Չելկաշը, Արտեմը, գնչու Զոբարը, կամ անվերջ որոնող փիլիսոփաներ – Կոննովալովը, Օրլովը, կամ միզանտրոպութեան հասած և հասարակութեան դէմ զինւած ըմբոստներ՝ Մալվան, Նատաշան, Սերեոգան, Պիլիպին, Պրոմտովը, Գուզդևը և «Նախկին Մարդիկը» իրանց Կովալդայի հետ, կամ վերջապէս այնպիսի անհավասարակշիռ ու անբովանդակ անհատներ, ինչպէս Թոմա Գորդէևը, Տիխոն Պալովիչը և այլն»⁶: Ազատությունը սիրում են նրանք, որոնց մեջ կա ուժ, կա տոկունություն: Եվ Գորկին սիրում է այդ տեսակ ուժը, փառաբանում նրան:

³ «Մշակ», Թիֆլիս, 1900, № 149, էջ 2:

⁴ «Մշակ», Թիֆլիս, 1901, № 246, էջ 2:

⁵ «Տարագ», Թիֆլիս, 1900, № 38, էջ 550:

⁶ «Տարագ», Թիֆլիս, 1900, № 39, էջ 561:

Խոսուին երևույթ է «Լումա»-ի հերթական համարներից մեկում զետեղված ծավալուն գրախոսությունը՝ «Գրականություն և կյանք» խորագրով՝ Ժամանակի հայտնի մշակութային գործիչ Մինաս Բերբերյանի հեղինակությամբ: Հոդվածը գրվել է Մ. Գորկու ընտիր երկերի հայերեն թարգմանության առիթով: Բերբերյանը նշում է, որ Մ. Գորկին, դեռևս ստեղծագործական առաջին քայլերից սկսած, երիտասարդ գրողների շարքում գրավել է առաջին տեղերից մեկը, և այդ շրջանում էլ նա արժանացել է Եվրոպական հայտնի գրողների բարձր գնահատականին. «Ժամանակակից ռուս գրողների մեջ առաջին տեղերից մեկն է բռնած և միշտ և մինչև իսկ Եվրոպացիները հետաքրքրվում են նրանով»⁷:

Հոդվածագիրը նշում է, որ համաշխարհային գրականության լավագույն նմուշների թարգմանությունը կարող է նպաստել ազգային գրականությունների զարգացմանն ու հարստացմանը: «Ես լիովին համաձայն եմ,– ընդգծում է նա,– որ մեր ընթերցողներին անհրաժեշտ է ծանոթանալ Շեկսպիրի, Գեթեի, Դիկկենսի, Զոլայի, Մոպասանի, Տոլստոյի, Իբսենի և այլ լավագույն հեղինակների գլուխ գործոցների հետ: Այդ գրուածքները կզարգացնեն մեր ընթերցողի գեղարուեստական ճաշակը, կլայնացնեն նրա մտաւոր հորիզոնը, կըդաստիարակեն նրան մարդասիրական սկզբունքների հիման վերայ, բայց միևնոյն ժամանակ տեսնում եմ, որ այդպիսի գրուածների թարգմանիչներ մենք շատ քիչ ունենք, ուստի մեր պարբերական մամուլը ստիպուած է տալ և երկրորդական օտար հեղինակների թարգմանությունները: Այդ տեսակի գրուածքների թարգմանիչներ շատ կգտնուին և խմբագրին մնում է ընտրել գրուածքներից լավագոյնը, իսկ թարգմանություններից ամենալաջողը»⁸:

Հոդվածագիրը գտնում է, որ բացի համամարդկային նշանակություն ունեցող երկերին ծանոթացնելու գործից, մամուլը պարտական է ներկայացնել գրական թարմ և առաջնակարգ երևույթներ, որոնց նա կարող է ծանոթանալ կա՛մ կարդալով նորագույն գրվածքների թարգմանությունները, կա՛մ նրանց մասին լույս տեսած քննադատական և կենսագրական հոդվածները: «Նորագոյն գրուածքների միջոցով,– նշում է նա,– մենք ծանոթանում ենք «այսօրուայ» մարդու բնա-

⁷ «Լումա», Թիֆլիս, 1902, № 3, էջ 149:

⁸ Նույն տեղում, էջ 151:

ւորութեան, գաղափարների, դրութեան, նիստ ու կացի ու իդէալների հետ: ...Լ. Տոլստոյի, Կորոլենկոյի, Չեխովի և Գորկիի վերջի վեպերը և վէպիկները կարդալիս դուք զգում եք ձեր առաջ ամբողջ ժամանակակից Ռուսիան, որի լաւագոյն ներկայացուցիչներն հենց այդ հեղինակներն են: Ուսումնասիրեցեք «Յարութիւնը», «Սիբիրական պատկերները», Չեխովի անթիւ մեծ ու փոքր վէպիկները և պատմութիւնները, և Մակսիմ Գորկիի գրութիւնները և դուք բացի գեղարուեստական բաւականութիւն ստանալուց, բացի ձեր մտքին և զգացմունքին պիտանի ճաշակ տալուց – դուք ուսումնասիրած կլինեք որպէս ուշիմ ճանապարհորդ կամ գիտնական...»⁹:

Ընթերցողը ծանոթանում է Գորկու կերտած կերպարներին՝ Չելկաշին՝ կտրիճ բոսյակ, մաքսատնից գողութիւն անող, ազատասեր և հարբեցող, Նատաշային՝ դժբախտ արարած, Սյոմկա և Միշկա բոսյակներին, որոնք գողութիւն են անում խմելու նպատակով, Թերեզային՝ «ընկած» կանանցից մեկին, Կոնովալովին՝ շատ համակրելի մի բոսյակ, որը, երբ չի խմում, աշխատասեր և ընդունակ բանվոր է, Օրլովին՝ արհեստավոր, – խմում է, հետո դառնում բոսյակ, նրանց ընկերներին՝ երբեմն մարդիկ» – ընկած, կորած արարածներ և այլոց:

Այդ կերպարների միջոցով Գորկին ներկայացնում է բոլորովին մի նոր աշխարհ: Եվ ըստ հեղինակի՝ ցավալին այն է, որ նման մարդկանց թիվը օրեցօր ավելանում է գյուղացիներով, որոնք, թողած արտ ու հող, գյուղ ու ընտանիք, վերցնում են շրջմոլիկի գավազան, թափառում քաղաքից-քաղաք՝ մերթ արհեստավորների և բանվորների, մերթ էլ վաճառականների զավակների ու մտավորականների հետ:

Մ. Գորկու երկերում այդ կերպարները համարձակ, ուժեղ, ազնիվ, վեհանձն, բարեհոգի մարդիկ են: Ընդհանրապէս Գորկու ստեղծած կերպարները վերին աստիճանի կենդանի բնավորութիւններ են, իրական անձնավորութիւններ:

Մ. Գորկին բացի բոսյակներից, ստեղծել է նաև բանտարկյալների, անառակ կանանց, գնչուների, բանվորների, արհեստավորների, վաճառականների և մտավորականների կերպարներ: Կարևորն այն է, որ Գորկին ռեալիստորեն է ներկայացրել իր կերպարներին: Նշենք

⁹ Նույն տեղում, էջ 151:

նաև, որ անվանի գրողը մշտապես գտնվել է ճշմարիտ արվեստի շրջանակներում:

Մ. Գորկին ռեալիստական արվեստի նշանավոր ներկայացուցիչներից է: Նրա երկերը ուղղակի բողոք են ժամանակի եվրոպական կուլտուրայի դեմ, բողոք՝ սոցիալական անհավասար հարաբերությունների, կեցության և գաղափարների դեմ: Նրա հերոսները դուրս են մղված մարդկության շրջապատից, տանջվում են հասարակության անտարբերության պատճառով: Մարդիկ են, որ ստեղծել են այդ ժամանակաշրջանի նիստն ու կացը: Ընդհանրապես արդարությունը մարդկային զոհեր չի ընդունում, մինչդեռ Գորկու ստեղծած կերպարները այդպիսի զոհեր են:

Մ. Գորկին, դիմելով իր ժամանակակիցներին, նշում է, որ իրենց կուլտուրան սխալ ճանապարհով է ընթացել, ստեղծվել է անարդար ներկա: Թեև Գորկուն էլ պարզ չէր, թե ինչպես է լինելու ապագան, սակայն նա նշել է, որ ապագան մարդուն պիտի իրավունք տա ապրելու մարդավայել, բնության ընծայած օրենքներով: Նա հավատում էր այդ օրենքներին և նրանց գալուն՝ մատնանշելով. «Նայեցէք ձեր չորս կողմը, կարդացէք Չեխովի գրուածքները և դուք կտեսնէք, որ միջին դասակարգը զուրկ է որևէ ձգտումից, որևէ իդէալից: Բուրժուան ապրում է գոհ իր դրութիւնից, ինտելիգենտի վերայ չէ յոյս դնել, դրանք չեն, որ պիտի կարողանան լաւագոյն կեանքի ձգտելով՝ խօսքից գործի անցել»¹⁰: Մ. Գորկին գտնում է նման խիզախ մարդկանց: Դրանք իր ստեղծած հերոսներն են:

Մ. Բերբերյանը, հիշելով Հովհ. Թումանյանի խոսքը, որ «պարբերական մամուլը ոչ ուժ և ոչ էլ կոչում ունի տաղանդ ստեղծելու կամ սպանելու», նշում է. «Մեր պարբերական մամուլի մէջ բացակայում է քննադատութիւնը... Եթէ մենք ունենայինք իսկական գրական քննադատութիւն, որը իրեն նպատակ դրած լինէր զարգացնել ընթերցողների ճաշակը և բացատրել հին ու նոր, մեր և օտար գրական երկերը – մենք կունենայինք շատ աւելի թարգմանական վէպեր, դրամաներ, բանաստեղծութիւններ և առ հասարակ գեղարուեստական գրուածքներ,

¹⁰ «Լուսմա», Թիֆլիս, 1902, № 3, էջ 160:

քան թէ ունինք այժմ, և երկրորդ՝ կրկնապատիկ զարգացած և ճոխացած կլինէր մեր ինքնությունը գրականությունը»¹¹:

Մ. Բերբերյանը գտնում է, որ չկա Գորկու պես ուրիշ գրող, որ այդքան կարճ ժամանակում մեծ հռչակ ստանա: Նրա ստեղծագործությունները ծանոթ են քաղաքակիրթ աշխարհին, նրա երկերը թարգմանված են տարբեր լեզուներով, նրա մասին քննադատական հարուստ գրականություն է ստեղծված:

Այդ գրականության մեջ բավական մեծ տեղ է գրավում Ֆրանսիայում «Revue des Deux Mondes» թերթում լույս տեսած Էժեն դե Վոգյունի «Մակսիմ Գորկին որպես գրող և որպես մարդ»¹² ծավալուն աշխատությունը: 1902 թ. «Մշակ» թերթի 233-րդ համարում Եղիշե Թոփչյանը տպագրում է գրախոսական: Հոդվածի սկզբում Թոփչյանը նշում է, որ 19-րդ դարի ութսունական թվականներին փայլում էր Լ. Տոլստոյի տաղանդը, լույս էին տեսնում Ի. Պոտապենկոյի, Պ. Բոբորիկինի, Վ. Նեմիրովիչ-Դանչենկոյի, Դ. Մամին-Սիբիրյակի վեպերը, գեղարվեստական մեծ ուժ էր ներկայացնում Վ. Կորոլենկոն, գրավիչ էին Ա. Չեխովի պատմվածքները, բայց ուսում քննադատները «серенькое время» անունով էին կոչում այդ ժամանակահատվածը: Նշված հեղինակների երկերում չկար ուժեղ բողոք, չկար ակտիվ վերաբերմունք դեպի կյանքը: Միայն Մաքսիմ Գորկու տաղանդն էր այդ ճաճանչները արձակողը, և լսվում էր բողոքի ուժգին ձայնը:

Վոգյունեն նկատում է, որ Մաքսիմ Գորկու և իտալացի Գաբրիելե Դ'Անունցիոյի ու անգլիացի Ռեդյարդ Կիփլինգի գրվածքների մեջ նիցշեական տենդենցիաների նմանություն կա: Գորկու մասին Վոգյունեն ընդհանրապես գրում է. «Գորկիի ստեղծագործությունները սկզբից մինչև վերջը ներկայացնում են մի բուռն բողոք գոյութան պայմանների դեմ... Նա ձգտում է զարթեցնել մարդկանց, ցոյց տալով, թէ որքան ամօթաբեր է հոգեկան գեղխությունը, թէ որքան դատապարտելի են սօցիալական վերքերը...»¹³: Թոփչյանը նշում է, որ Վոգյունեն «օգտակար

¹¹ Նույն տեղում, էջ 150:

¹² Տպագրվել է նաև ռուսերեն՝ Вогюэ Э.М. де. Максим Горький как писатель и как человек. М., 1902.

¹³ «Մշակ», Թիֆլիս, 1902, № 233, էջ 2:

գործունեութիւն է արել, տալով տաղանդավոր գրողի համառօտ կենսագրութիւնն ու երկերի վերլուծումը»¹⁴:

«Արևելյան Մամուլ»-ը նույնպէս անդրադառնում է Գորկու ստեղծագործություններին: 28-րդ համարում տպագրվում է Ա. Նավարյանի «Մաքսիմ Կորքի. Իր Վանիա տրամին առթիւ» վերնագրով հոդվածը: Հոդվածագիրը տեղեկացնում է, որ ֆրանսիացիները շատ ժամանակ չեն կարող «ըմբռնել օտար հանճառների գեղեցկությունը»: Բայց արդեն բավական տարիներ է ֆրանսիացի ընթերցողը ծանոթանում է օտար գրականությանը՝ Իբսեն, Կիպլինգ, Թ. Հարտ, Հոֆման, դ'Անունցիոյ և ուրիշներ: Նավայանը թվարկում է նաև ռուս գրողների անունները: «Նախ Թուրկընէֆ,– գրում է Նավայանը,– իր զգայուն եւ գեղանուշ երեւակայութեամբ, Տութոյիսկի, ցաւի եւ գրութեան վիպագիրը...: Տութոյիսկիյէն յետոյ Լէոն Թօլսթօյ, արդեն հռչակաւոր իր երկրինմէջ կանգնելով փառաւոր երկերու շքեղ խորան մը: Թօլսթօյէն ետքը եկան ուրիշ խել մը գրագէտներ, ի միջի այլոց Բիդիմսկի, Գուչարոֆ, Տմիթրի տը Մէրէժօվսքի, իսկ այժմ Կորքին է, որոյ համբաւը կը տարածուի աստիճանաբար ֆրանսական գրականութեան մէջ»¹⁵:

Հոդվածագիրը նշում է, որ Ռուսաստանում տարածված է մի գրույց, թե կա մի երկաթյա մատանի՝ փառքի խորհրդանիշ, որ հետզհետե փոխանցվում է ազգային մեծագույն հեղինակների միջև: Սկզբից Պուշկինն էր պահում այդ մատանին 19-րդ դարում, հետո այն անցավ Տուրգենևին, իսկ այժմ Տոլստոյն է պահում իր արկղի մեջ: Եվ արդեն որոշված է, որ հաջորդը կլինի Մաքսիմ Գորկին: Գորկին ռուս գրականության ժան Ռիշպենն է, բայց ավելի ինքնատիպ ու ավելի ազգային: Գորկու հերոսները ավելի հատկանշական են և ունեն գաղափարների և բարոյականության եզակի լիություն:

Նկարագրելով Գորկու անցած դաժան ու մռայլ տարիները, մանկության և երիտասարդության անցած ճանապարհը՝ այս վերջին հարաբերական խաղաղ կյանքում նա թողնում է իր գեղեցիկ բնակարանը և մեկնում «գիշերանց ու դեգերելով կը խոկայ մինչեւ արշալոյս... Սակայն որ հանճար է եւ որայ վիրագ դիմագծութիւնն այնպիսի կուռ արտայայտութիւն մը ունի որ կը ներգործէ, կը խոսվէ դիտողն: Շարժուն

¹⁴ Նույն տեղում, էջ 2:

¹⁵ «Արևելյան մամուլ», Իզմիր, 1903, № 28, էջ 659:

աչքերու բոցին մէջ տեսակ մը մութիկ կայ անսպայ, բայց լեցուն ներշնչումով, կեանքով եւ երազով: Ոչ միայն ան գնահատուած է նուրբ եւ գրասէր դասակարգէն, այլ եւ խոնարհ եւ տգէտ խաւերէն, որք իր ցաւի եղբայրներն էին երբեմն»¹⁶:

Մ. Գորկին մեծ ներդրում է ունեցել հայ գրականության տարածման գործում: Հայտնի է, որ նրա ջանքերով ու խմբագրությամբ 1916 թ. «Պարուս» հրատարակչությունը տպագրում է «Сборник Армянской Литературы» ժողովածուն:

Այդ առումով «Մշակ» թերթում իր խոսքն է ասել մեծանուն Ալ. Շիրվանզադեն: Նշելով, որ առաջին անգամ չեն հայ նմուշները թարգմանվում ռուսերեն և լույս ընծայվում, գրել է. «Մակսիմ Գորկին ինքնաբերաբար ոչ միայն հետաքրքրվում է հայ գեղեցիկ գրականությամբ, այլ և աշխատում է հետաքրքրել նրանով և ռուս հասարակությունը»¹⁷:

Ալ. Շիրվանզադեն նկատի է ունեցել այն փաստը, որ Մ. Գորկին սոսկ բանաստեղծ չէ, այլ բացառիկ ստեղծագործող խոշորություն, ով Տոլստոյից և Դոստոևսկուց հետո վայելում է համաշխարհային հռչակ: Հանդես գալով Գորկու հակառակորդների դեմ՝ Ալ. Շիրվանզադեն նշում է, որ իրենք բոլորը միասին չեն հավասարվի Գորկու տաղանդի կեսին:

«Մաքսիմ Գորկին,– ավելացնում է Ալ. Շիրվանզադեն,– ռուս գրականութեան հորիզոնում մի վիթխարի է, որի ստուերի մէջ չքանում են շատ փքուն մեծութիւններ: Նա դեռ շատ ընտիր երկեր կը տայ»¹⁸:

Մ. Գորկին՝ որպէս աստվածաշնորհ գրող, հարազատ որդու իրավունքով ու սիրով մտել է հայկական դարավոր գրականության աշխարհը և արժանացել մաշտոցյան սերունդների ուշադրությանն ու սիրուն: Նրա այդ մուտքը հավերժական է, արևաշող:

Ճիշտ են նկատել աշխարհի անվանի գիտնականները առ այն, որ ուզածդ ժողովրդի մեծանուն որդին դառնում է բոլոր ազգերի արդարամտության, ազատության, հավասարության խորհրդանիշ-արվեստագետը, դանկոյական խիզախության դրոշակակիրը:

¹⁶ Նույն տեղում, էջ 660:

¹⁷ «Մշակ», Թիֆլիս, 1916, № 119, էջ 2:

¹⁸ Նույն տեղում, էջ 2:

Նման հսկաներից է Մաքսիմ Գորկին՝ ինչպես իր մայր՝ ռուս ժողովրդի, այնպես էլ հայ ժողովրդի մտապատկերներում և ամենօրյա հուսավառ գործընթացում:

Հիրավի, դժվար է գերազնահատել Մաքսիմ Գորկու դերը հայ գրականության զարգացման գործում: Իր գրական, հասարակական և հրապարակախոսական գործունեությամբ նա մեծապես նպաստել է ռուս իրականության մեջ հայ գրականության մասսայականացմանը:

КАРЕН ХАНИЯН

*кандидат филологических наук, доцент
зам. декана по науке и международному сотрудничеству
филологического факультета АГПУ имени Х. Абовяна*

МАКСИМ ГОРЬКИЙ И АРМЯНСКАЯ ПРЕССА

Резюме

Являясь одним из наследников демократических традиций русской классической литературы, Максим Горький проявил себя как новатор в области обновления и развития художественного слова.

Все известные горьковеды с удовлетворением восприняли выход М. Горького на литературную сцену, подчеркнув, что своим свежим и ярким словом он ознаменовал новую эпоху не только в истории русской, но и мировой культуры.

С первых шагов своей литературной деятельности в произведениях Горького звучал голос праведного протеста против жестоких сил, которые с презрением относились к простому народу.

Подобно видным русским писателям, произведения Горького всегда находились в центре внимания армянских читателей. И не случайно армянская пресса того времени всегда свежо отзывалась о его произведениях.

Произведения Максима Горького в начале XX века переводили на армянский язык Ов. Туманян, Т. Оганесян, К. Красильникян, Ст. Шаумян, Г. Бедеян, Ав. Исаакян, Х. Степанян, Симак, Воста-

ник, С. Бабян, Саргис М. Исаакян и другие. Эти переводы публиковались в различных периодических изданиях: «Мурч», «Лума», «Мшак», «Нор-Дар», «Тараз» и других.

Произведения Горького издавались также отдельными книгами: «Однажды осенью» (Тифлис, 1901), «В степи» (Александрополь, 1902), «Макар Чудра» (Тифлис, 1903), «Несвоевременные мысли» (Шуши, 1903) и др.

Своей литературной, общественной и публицистической деятельностью М. Горький внес большой вклад в популяризацию армянской литературы в российской действительности, по праву вошел в мир многовековой армянской литературы.

Ключевые слова: Максим Горький, армяно-русские литературные связи, армянская пресса, армянское литературоведение.

KAREN KHANYAN

PHD in Philology, Assistant professor of the chair of Foreign Literature, Deputy Dean for Science and International Cooperation of the Philological Faculty of the ASPU named after Kh. Abovyan

MAXIM GORKY AND THE ARMENIAN PRESS

Abstract

Being one of the carriers of the legacy of the democratic traditions of Russian classical literature, Maxim Gorky proved himself to be an innovator in the field of renewal and development of the literary word.

All famous Gorky scholars were pleased with M. Gorky's presence on the literary stage, emphasizing that with his fresh and bright words he marked a new era not only in the history of Russian but also world culture.

From the first steps of his literary activity, Gorky's works voiced of righteous protest against cruel forces that treated the common people with contempt.

Like prominent Russian writers, Gorky's works have always been in the center of attention of Armenian readers. And it is no coincidence that the Armenian press of that time always responded actively to his works.

The works of Maxim Gorky were translated into Armenian at the beginning of the twentieth century. H. Tumanyan, T. Hovhanesyan, K. Krasilnikyan, St. Shahumyan, G. Bedelyan, Av. Isahakyan, Kh. Stepanyan, Simak, Vostanik, S. Babiyan, Sargis M. Isahakyan and others. These translations were published in various periodicals: "Murch", "Luma", "Mshak", "Nor-Dar", "Taraz" and others. Gorky's works were also published as separate books: "Once in the Autumn" (Tiflis, 1901), "On the Steppes" (Alexandrapol, 1902), "Makar Chudra" (Tiflis, 1903), "Untimely Thoughts" (Shushi, 1903), etc.

With his literary, social and journalistic activities, M. Gorky made a great contribution to the popularization of Armenian literature in Russian reality, and rightfully entered the world of centuries-old Armenian literature.

Keywords: *Maxim Gorky, Armenian-Russian literary ties, Armenian press, Armenian literary studies.*